«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԷՔՍՊՈ 2024

Հզորացրու
Ոգնշնչիր
Գործիր

ՕՐ I. Մայիսի 17, 2024, Երևան
«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն

2024թ. **մայիսի 17-ին** «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնում (***հասցե՝ Մ. Խորենացու փող. 15***) տեղի կունենա «*Հզորացրու, ոգեշնչիր, գործիր*» նշանաբանով **Երիտասարդական էքսպո 2024**-ի առաջին օրը: Էքսպոն կազմակերպվում է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում, որի երկրորդ և երրորդ օրերի միջոցառումները կանցկացվեն օգոստոսին՝ 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք Գավառում: Ծրագրի շրջանակներում ամենամյա առաջին երիտասարդական էքսպոն 2023 թվականին էր՝ «*Երիտասարդ, ակտիվ, լսելի*» նշանաբանով: Երիտասարդական էքսպո 2023-ի աշխատանքներին կարելի է ծանոթանալ էքսպոյի ինստագրամյան էջում՝ https://www.instagram.com/youthexpo2023/:

Ամենամյա էքսպոյի նպատակն է.

- երիտասարդներին, երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի ոլորտում ակտիվ դերակատարներին տեղեկացնել «Հայաստանի քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի, ինչպես նաև տարբեր մակարդակներում երիտասարդների մասնակցության համար առկա ռեսուրսների և հարթակների մասին.
- երիտասարդների և բոլոր դերակատարների հետ համատեղ լուծումներ փնտրել՝ դիմակայելու դժվարություններին, որոնց բախվում են երիտասարդները.
- փոխանակել երիտասարդների հետ աշխատանքի, երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման փորձառությունը.
- գտնել համագործակցության նոր հնարավորություններ:

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից և իրականացվում է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության և իր ենթադրամաշնորհառուներ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-Սիվիտաս» ՀԿ-ի և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում ֆորմալ և ոչ ֆորմալ քաղաքացիական կրթության որակը՝ խթանելու Հայաստանում երիտասարդների հանրային ներգրավվածությունը և ժողովրդավարական գործընթացները: Ծրագրի մասին առավել մանրամասն կարելի է տեղեկանալ և նորություններին հետևել ծրագրի ֆեյսբուքյան էջում:

Ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով:

ՆԱԽՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Օր I. Մայիսի 17	
10:00-10:30	**Էքսպոյի բացում** Ողջույնի խոսք՝ • Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչ (*ենթակա է հաստատման*) • ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչ (*ենթակա է հաստատման*) • Մարիամ Մարտիրոսյան *«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի ղեկավար* • Ավետիք Խոստեղյան *«Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն*
10:30-12:00	**Պանելային քննարկում** *Ինչպե՞ս ներգրավել երիտասարդներին երիտասարդական ծրագրերում. երիտասարդների ներգրավվածության հնարավորություններն ու խոչընդոտները երիտասարդական ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման փուլերում* **Խոսնակներ՝** Անգելինա Ալեքսանյան *Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական Միավորում (ՀԵՀԵՄ)* Արմեն Բեժանյան *Փրոջեքթ Հարմոնի Հայաստան* Լուսինե Կարապետյան *Սըլուշն ՀԱԲ* Վահե Առուստամյան *«Հույսի կամուրջ» ՀԿ, Իջևանի մասնաճյուղ* **Վարող՝** Մամիկոն Սիմոնյան
12:00-13:00	**Երիտասարդական ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման ինկուբատոր** Էքսպոյի մասնակից վեց կազմակերպություններ, որոնք 2023թ. իրականացրել են երիտասարդական ծրագրեր «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում հայտարարված դրամաշնորհներով, ներկայացնում են իրենց ծրագրերը գործընկեր կազմակերպությունների և էքսպոյի այցելուների համար: Յուրաքանչյուր կազմակերպություն 10 րոպեի ընթացքում կներկայացնի իր կողմից իրականացված ծրագիրը և քաղված դասերը:
13:00-14:00	**Ընդմիջում**

14:00-17:30	**Երիտասարդական ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման ինկուբատոր** Էքսպոյի մասնակից 14 կազմակերպություններ ներկայացնում են «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում 2024թ. հայտարարված դրամաշնորհային մրցույթին ներկայացրած իրենց նախագծերը՝ ծրագրի ներկայացուցիչներից և երիտասարդներից կազմված ժյուրիի, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների համար: Յուրաքանչյուր կազմակերպություն 15 րոպեի ընթացքում կներկայացնի իր նախագիծը և կպատասխանի ժյուրիի հարցերին:
16:00-17:30	**Պանելային քննարկում** *Երիտասարդների քաղաքացիական ակտիվության դրսևորումները Հայաստանում. Պետական մարմինների, ՔՀԿ-ների և սոցիալական մեդիա հարթակների դերը երիտասարդների քաղաքացիական կրթության և ներգրավվածության գործընթացներում* **Խոսնակներ՝** Նինա Շահվերդյան *«Ինադու» փոդքաստ* *ԿԳՄՍՆ ներկայացուցիչ (համաձայնությամբ)* Ռուբեն Եսայան *Վիդեոբլոգեր, հաղորդավար, գրող* Անուշ Ասլանյան *«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ* **Վարող՝** Աշոտ Խուրշուդյան
17:30-18:00	**Ընդմիջում**
18:00-19:00	«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում հայտարարված 2024թ. դրամաշնորհային մրցույթի հաղթող կազմակերպությունների ներկայացում Օգոստոսի 23-24-ին Գավառում նախատեսվող Երիտասարդական էքսպո 2024-ի հաջորդ փուլերի վերաբերյալ անոնս